ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

2021 թվականի նոյեմբերի 5-ին Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոցում կայացավ ծնողական ժողովի արտահերթ նիստը, որին մասնակցում էին խորհրդի բոլոր 13 անդամները:

Օրակարգում՝

1. Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդների զարգացման ծրագրերի քննարկում /զեկուցող՝ Էլ. Թումանյան/
2. Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդներին տրված ձայների հաշվիչ հանձնաժողովի ընտրություն / զեկուցող՝ Ա. Վարոսյան, Շ. Գևորգյան/
3. Փակ քվեարկությամբ ծնողխորհրդի թեկնածուի ընտրություն

1. **Լսեցին՝** տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ծրագիրը՝ համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի հ. 319-Ն և 2021 թվականի օգոստոսի 27-ի հ. 1380-Ն որոշումների:
Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի միակ հավակնորդ Էլ. Թումանյանը ներկայացրեց զարգացման ծրագիրը, որում հանգամանորեն անդրադարձավ դպրոցի առավելություններին, ուժեղ և թույլ կողմերին, ներկայացրեց իր ծրագրի նպատակներն ու դրանց իրականացման ուղիները:

Բոլոր ծնողները ծրագրի վերաբերյալ դրական կարծիքներ արտահայտեցին:

2. **Լսեցին՝** հաշվիչ հանձնաժողովի ընտրության հարցը: Գ. Խանամիրյանն առաջարկեց հաշվիչ հանձնաժողովի անդամներ գրանցել Ա. Վարոսյանին և Շ. Գևորգյանին: Առաջարկը միաձայն ընդունվեց:

Հաշվի առնելով Գ. Խանամիրյանի առաջարկությունը ծնողական խորհուրդը
ՈՐՈՇՈՒՄ Է

Քվեարկության արդյունքները ներկայացնելու համար բաց քվեարկությամբ ընտրել հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝
1. Ա. Վարոսյան
2. Շ. Գևորգյան

3. Անցկացվեց փակ քվեարկություն, որին մասնակցեց ծնողխորհրդի 13 անդամ:
Լսեցին՝ ընտրության հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները.
Կողմ - 13 ձայն
Դեմ - 0 ձայն

Ելնելով փակ թվեարկության արդյունքներից՝ ծնողխորհուրդը
ՈՐՈՇՈՒՄ Է

Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոցի ծնողխորհրդի կողմից ընտրված համարել Էլ. Թումանյանին:

Ծնողխորհրդի նախագահ՝ Մ. Իգնատյան

Ծնողխորհրդի քարտուղար՝ Վ. Ավետիսյան